ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 22.03.2005

- Գլուխ 1 Ընդհանուր դրույթներ
- Գլուխ 2 Ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպումը
- Գլուխ 3 Հակաահաբեկչական գործողությունների իրականացումը
- Գլուխ 4 Ահաբեկչական գործողության հետեւանքով պատճառված փսասի փոխհատուցումը եւ տուժած անձանց սոցիալական վերականգնումը
- Գլուխ 5 Ահաբեկչության դեմ պայքարին մասնակից անձանց իրավական եւ սոցիալական պաշտպանությունը
- Գլուխ 6 Վերահսկողությունն ահաբեկչության դեմ պայքարի իրականացման օրինականության նկատմամբ
- Գլուխ 7 Եզրափակիչ դրույթ

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի իրավական եւ կազմակերպական հիմքերը եւ կարգավորում է ահաբեկչության դեմ պայքարի իրականացման հետ կապված հարաբերությունները։

Հոդված 2. Ահաբեկչության դեմ պայքարի նպատակները

Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի կազմակերպումը նպատակաուղղված է՝

1) ահաբեկչական գործունեության նախազգուշացմանը, բացահայտմանը, կանխմանը, խափանմանը եւ դրա հետեւանքների նվազեցմանը.

2) ահաբեկչությունից անձի, հասարակության եւ պետության պաշտպանությանը.

3) ահաբեկչական գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը եւ վերացմանը։

Հոդված 3. Ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքերը

Ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քրեական, քրեական դատավարության եւ քաղաքացիական օրենսգրքերը, սույն օրենքը, այլ օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը։

Հոդված 4. Ահաբեկչության դեմ պայքարի հիմնական սկզբունքները

Ահաբեկչության դեմ պայքարի հիմնական սկզբունքներն են՝

1) օրինականությունը.

2) նախազգուշացման միջոցառումների գերակայությունը.

3) հակաահաբեկչական գործողություններ անցկացնելիս ներգրավվող ուժերի եւ միջոցների միանձնյա ղեկավարումը.

4) ահաբեկչական գործողության կատարման, ինչպես նաեւ նախապատրաստման եւ ֆինանսավորման համար պատժի անխուսափելիությունը.

5) ծայրահեղ անհրաժեշտության դեպքում ահաբեկչին նվազագույն զիջումներ կատարելը.

6) ահաբեկչության դեմ պայքարի բացահայտ եւ գաղտնի մեթոդների զուգակցումը.

7) կանխարգելիչ, իրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, քարոզչական միջոցների համալիր օգտագործումը.

8) ահաբեկչական գործողության հետեւանքով վտանգի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության գերակայությունը.

9) հակաահաբեկչական գործողությունների անցկացման եղանակների, գործելակերպի (մարտավարության) եւ մասնակիցների կազմի նվազագույն հրապարակայնությունը:

Հոդված 5. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) ահաբեկչական գործողություն՝ ահաբեկչական բնույթի հանցագործության անմիջական կատարում՝ պայթյունի, հրկիզման, միջուկային պայթուցիկ տարրերի, ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական, պայթուցիկ, թունավորող, ուժեղ ներգործողնյութերի կիրառման կամ դրա սպառնալիքի, տրանսպորտային միջոցների կամ այլ օբյեկտների ոչնչացման, վնասման կամ զավթման, պետական կամ հասարակական գործչի, ազգային, էթնիկական, կրոնական կամ բնակչության այլ խմբերի ներկայացուցչի կյանքի դեմ ոտնձգության, պատանդների վերցման, մարդու առեւանգման, տեխնոգեն բնույթի վթարների եւ աղետների համար պայմաններ ստեղծելու ճանապարհով անորոշ շրջանակի անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու նպատակով վտանգ ստեղծելու կամ այդպիսի վտանգի ստեղծման իրական սպառնալիքի, ցանկացած ձեւի եւ ցանկացած միջոցներով սպառնալիքների տարածման, մարդկային զոհերի, զգալի գույքային վնաս հասցնելու կամ հասարակական վտանգավոր հետեւանքներ առաջացնող այլ գործողությունների միջոցով.

2) ահաբեկչական գործունեություն՝ ահաբեկչական գործողության կազմակերպում, նախապատրաստում եւ իրականացում, ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ բռնության, ահաբեկչական նպատակներով նյութական օբյեկտների ոչնչացման հրահրում, ահաբեկչական գործողություն կատարելու համար անօրինական զինված կազմավորման, հանցավոր խմբավորման կազմակերպում, ինչպես նաեւ մասնակցություն այդպիսի գործողությանը, ահաբեկիչների հավաքագրում, զինում, ուսուցանում, ահաբեկչական կազմակերպության կամ ահաբեկչական խմբի ֆինանսավորում կամ այլ աջակցություն.

3) ահաբեկիչ՝ ահաբեկչական գործողություն, ահաբեկչական գործողության նախապատրաստում կամ դրա կատարման փորձ կատարած անձ.

4) ահաբեկչության դեմ պայքար՝ ահաբեկչական գործունեության բացահայտմանը, կանխմանը, խափանմանը, հետեւանքների նվազեցմանն ուղղված գործունեություն.

5) հակաահաբեկչական գործողություն՝ ահաբեկչական գործողության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաեւ պետության շահերի եւ ֆիզիկական անձանց անվտանգության ապահովմանը, ահաբեկիչների վնասազերծմանը եւ ահաբեկչական գործողությունների հետեւանքների նվազեցմանն ուղղված հատուկ միջոցառումներ.

6) հակաահաբեկչական գործողության իրականացման գոտի՝ տեղանքի առանձին հատվածներ, տրանսպորտային միջոց, շենք, շինություն, կառույց եւ դրանց հարող տարածքներ, որոնց սահմաններում անցկացվում է նշված գործողությունը.

7) պատանդ՝ պետությանը, կազմակերպությանը կամ առանձին անձանց որեւէ գործողություն կատարելուն կամ որեւէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով առեւանգված կամ պահվող անձ:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում

Ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա համագործակցում է օտարերկրյա պետությունների, ինչպես նաեւ ահաբեկչության դեմ պայքար իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ։

ԳԼՈՒԽ 2

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 7. Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինները

Ահաբեկչության դեմ պայքարն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինները՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում։

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինը.

2) Հայաստանի Հանրապետության ոստիկանության հանրապետական գործադիր մարմինը.

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության հանրապետական գործադիր մարմինը։

Ահաբեկչության դեմ պայքարին օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում մասնակցում են նաեւ գործադիր իշխանության հանրապետական մյուս մարմինները։

Հոդված 8. Հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբը

Ահաբեկչության դեմ պայքարն անմիջականորեն իրականացնող սուբյեկտների եւ գործադիր իշխանության հանրապետական մյուս մարմինների գործողությունների համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահը անհրաժեշտության դեպքում կարող է ձեւավորել հակաահաբեկչական գործողությանօպերատիվ շտաբ, որի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են սույն օրենքի 7-րդ հոդվածում թվարկված պետական մարմինների ղեկավարները։

Հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի կազմում կարող են ընդգրկվել նաեւ գործադիր իշխանության հանրապետական այլ մարմինների ղեկավարներ։

Հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը, իսկ անմիջական ղեկավարումը՝ շտաբի պետը։

Ելնելով ահաբեկչական գործողության կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների բնույթից՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հակաահաբեկչական գործողության օպերատիվ շտաբի պետ է նշանակվում սույն օրենքի 7-րդ հոդվածում թվարկված հանրապետական գործադիր մարմիններից մեկի ղեկավարը։

Հոդված 9. Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող մարմինների հիմնական գործառույթները

Ահաբեկչության դեմ պայքար իրականացնող պետական մարմինները օրենքով ամրագրված իրենց լիազորությունների սահմաններում՝

1) մշակում եւ իրականացնում են ահաբեկչական գործողությունների բացահայտմանը, կանխմանը, խափանմանը, հետեւանքների նվազեցմանը, ինչպես նաեւ դրանց կատարմանը նպաստող պատճառների եւ պայմանների բացահայտմանը եւ վերացմանը նպատակաուղղված կազմակերպական, ռեժիմային, կանխարգելիչ, դաստիարակչական եւ այլ միջոցառումներ.

2) ստեղծում են ահաբեկչության դեմ պայքարի մասնագիտացված ստորաբաժանումներ.

3) մասնակցում են ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախապատրաստմանը.

4) մշակում եւ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն են ներկայացնում առաջարկություններ՝ ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման մասին։